«Ապարեմ» («Մեհյան», թիվ 7) հոդվածում Կոստան Չարյանն ասում է, որ հանդեսը հայկականի է եղանակով, քանի որ չի գոյում միջակություններ: Այս դիքերից 1913-ի «Գրական ասուխները» անիրավացիորեն բնորոշում է «ամբողջ» եւ «ամբողջային» բառերով: Սակայն շարունակության մեջ կարելի է նրա սթափության կոչը.

«Գիտեն՝ արդոյց այն աղբատամիտ պարոնները, սրբապիծները, որ կը

քրտմնեն մեզի դէմ, կզգա՞ն արդոյց, որ այս րոպէիս մենք իբրեւ ազգ մտավոր եւ հոգեկան սնանկություն մը կը ներկայացնենք, որ արվեստը եւ գրականությունը միակ միջոցն են, որով կրնանք արտահայտել թաքնված ազգային հանճարը եւ մեր գոյության պատճառը հաստատել: Միջակություն, վախ, մտային մուրացականություն, հոգեկան անգոյություն - ահա՛ տխուր պատկերը, որ մեզ կը շրջապատէ: Միջակությանց երկիրն է մեր երկիրը...» (էջ 99):

«Տեղին հանճարը արթնցնելու» էր կոչված Դանիել Վարուժանի (Հակոբ Սիրունու համագործակցությամբ) «Նավասարդ» գրական-գեղարվեստական տարեգիրքը, ինչի միակ հատորը լույս տեսավ 1914-ին Կ. Պոլսում: Նա, ի հակադրություն



ապագայապաշտության (futurism), դարձավ անցյալապաշտության (passeism) քարոզիչը: Գրականություն բաժնում գեղեցկ էն Վարուժանի «Նավասարդ»-ը, Յարճանյանի «Նավասարդ»-ը, Վեդամ Տ. Կարապետյանի «Ինտակական մեծականներ եւ Նավասարդի տոնը Տարոն մէջ» եւ արեւմտահայ ու արեւելահայ հեղինակների բազմաթիվ գործեր:

20-րդ դարասկիզբը հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց նոր ոճագործություններով: Այնքան մեծ դժվարությամբ սերմանած ազատագրական գաղափարները, որոնք վերածվեցին ֆիդայական շարժման, դեմ առան թուրքական պետության ջարդարար մեքենայի անխափան գործունեությանը: Համիդյան ջարդերին հաջորդեցին երիտուրների հրահրած նորանոր ջարդերն Ադալայում եւ երկրի բոլոր հայաշատ վայրերում: Ի վերջո, կուրճացվեց եւ իրականացվեց 1915 թվականի համազգային ողբերգությունը՝ ցեղասպանություն իր բոլոր օրենքներով: Հայ ժողովուրդը բնաջնջվեց իր պատմական հայրենիքում, կենդանի մնացածները բռնագաղթի ենթարկվեցին, մեռան անապատում կամ դարձան հայրենագուրկ փախսականներ: Սա հայ ժողովրդի ամենաճանր փորձության ժամն էր: Որտեղ ժողովուրդն էր, այնտեղ էլ գրականությունն էր: Միայն ծանր մղձավանջն էր, որ արտահայտվեց Գրիգոր Չոխրապի Ֆրանսերեն գրած աշխատությունների եւ հրապարակագրական առանձին էջերի մեջ, Յարճանյանի «Դյուզալորներ» (1902), «Հայրդիներ» (1905, 1906, 1908) բանաստեղծական շարքերում, «Հոգեվարքի եւ հույսի շափ» (1907), «Կարմիր լուրեր բարեկամ» (1909) գրքերում, տարագիր հայուկան ուղղված տասներկու կոչերում եւ «Սուրբ Մեսրոպ» (1912) պոեմում, Դանիել Վարուժանի «Տեղին սիրտը» (1909), «Հեթանոս եղբեր» (1912) ժողովածուների եւ



«Ջարդը» (1909) պոեմի մեջ, Ռուբեն Սեւակի «Կարմիր գիրք»-ում (1910) Աղանայի ջարդերին նվիրված քերթվածներում՝ «Հայաստան», «Չանգակներ, զանգակներ», «Ով իմ հայրենիք», «Ջարդին խենթը», «Առջի հայեր», «Վերջի հայեր»:

Ֆարճանյանը գրեց «Հեղափոխության Նարեկը», Վարուժանը դարձավ ցեղի ուժի ու վրեժի ձայնարկուն, Ավետիս Ահարոնյանը՝ զուլումի ու սարսափի երգիչ... Այսպես՝ հայության, հայկականյան գաղափարները խորապես համակել էին 20-րդ դարասկզբի հայ մտավորականությանը:

1915-ի եղեռնին ժողովրդի հետ մեկտեղ գոհ զնաց նրա մտավոր սերունդը՝ հայոց դատի հետամուտ եւ հանուն ժողովրդի իր անձնական կյանքը մոռացած Գրիգոր Չոխրապի, Արմա Յարճանյանի, Մուսանթը, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սեւակը, Երուսիմը, Թվարիսյանը, Չարդարյանը, Արմա Ֆարճանյանը...

Նույն ցավի մեջ էին արեւելահայ գրողները՝ Հովհաննես Թումանյանը, Վահան Տերյանը, Մյուսները: Մեր հայրազգի ման տեսակետից յուրաքանչյուրը մի առանձին ուսումնասիրության կոչ է, բայց հնարավոր սեղմ ընդգրկումով պատկերն այս է:

Շարունակություն՝ էջ 8

ՀԱՅՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂԱՅԻՍ Կ ԿԱՐՆԵՋԻ (1780-1799)

Սկիզբը՝ էջ 4

Նույն մտադրությամբ նամակներ է ուղարկել նաեւ տեղապահ Սիմեոն Եպիսկոպոսին, Աստուխանում իբրեւ նվիրակ գտնվող Եփրեմ Եպիսկոպոսին, Տիգրիսում գտնվող գեղարքանի Ղազարի Եպիսկոպոսին եւ անգամ իր մրցակից Դանիել պատրիարքին: Բոլորին էլ խնդրել է իր թեկնածությունը պաշտպանել:

Ղուկասի մահվան լուրը Կ. Պոլիս հասավ 1800 թվի փետրվարի 7-ին: Դանիել պատրիարքն իր աշակերտ, ապագա կաթողիկոս Ներսես վարդապետ Աշտուրկանցի ուղարկել էր Եջմիածին՝ իր նվիրակության հաշվին, արդյունքը եւ ընձանները տասնելու: Նա Կարին հասավ Ղուկասի մահվանից յոթ օր հետո, ուստի ամենիցապես սուրիանդակ ուղարկեց Դանիել պատրիարքին՝ այդ լուրը հասցնելու: Այլ տեղեկությունների համաձայն՝ Ներսես Եջմիածին էր հասել Ղուկասի մահվանից չորս օր առաջ: Մ. Օրմանյանը հակված է կարծելու, որ Կարնից սուրիանդակ ուղարկվել էր Ղուկասի ծանր վիճակը հայտնելու: Միայն փետրվարի 17-ին էր նա այդ մասին հայտնել նվիրակությանը Նիկոմեդիայում գտնվող Գալուստ ե-

պիսկոպոսին, որը փետրվարի 22-ին եկել էր Կ. Պոլիս, որ հաջորդի մասին խորհրդակցեց: Լուրը բերնեբերան արագ տարածվեց ժողովրդի մեջ, միաժամանակ նամակներ տարցնեցին Մայր Աթոռից, որոնցում առաջարկվում էր Դանիելի թեկնածությունը: Մարտի 18-ին Կ. Պոլիս հասավ Նաեւ Դավիթ Եպիսկոպոսը: Դա Մեծ պառօն Դատավորի կիրակի օրն էր, երբ Դանիել պատրիարքը, Գալուստ կնիքակր եւ Երուսաղեմի փոխանորդ Հայկոք երեք եկեղեցում յոթական բախտա էին ձեռնադրում եւ Ղուկասի հիշում որպես հանգուցյալ կաթողիկոս: Կաթողիկոսի ընտրության հարցը դարձավ մեծամեծների ընտրության առարկա, քանի որ միաբանությունն այն թողել էր թուրքափայերի հայեցողությանը: Մարտի 28-ին ամիրանների ժողով գումարվեց ենիխանում՝ պատրիարքի գլխավորությամբ: Դավիթը եւ Գալուստը պնդում էին Դանիելի թեկնածությունը, սակայն իրականում աշխատում էին Հովսեփի թեկնածությունն օրակարգից հանել: Նրանք, մեղմ մյուսից անկախ, սրտի խորքում հույսեր էին փայփայում, որ Դանիելի կաթողիկոսանալու դեպքում կտիրանան պատրիարքական աթոռին: Սա-

կայն Եջմիածնից հատուկ նամակ էր եկել, որ նրանց ընտրությունը բացառվի: Սուեփան Սեբաստացու ողմ հանդես եկան նեսաբացիները: Օսմական տնտեսության կասկածանքի տակ ընկնելու համար Եփրեմի եւ Հովսեփի թեկնածությունները հավանություն չստացան պոլսեցիների կողմից: Դանիելին համաձայն էին, սակայն չէին ուզում պատրիարքական խնդիրներ առաջ բերել՝ Դանիելի կաթողիկոսության դեպքում: Նրան անգամ համոզեցին հրաժարվել կաթողիկոսությունից: Ժողովականները խնդրեցին, որ պատրիարքը ներկայացնի հարմարագույն տեղեկանքներ: Կառավարությունից էլ ստացվեց մեծ վեգիրի հրաման, որ չորս օրվա ընթացքում լուծեն կաթողիկոսի ընտրության հարցը: Նամակը մեծ վեգիրից եկավ ապրիլի 9-ին, այսինքն՝ 13-ին խնդիրը պետք է փակվեր:

Ապրիլի 11-ին եղավ մեծամեծների նախապատրաստական նիստը, որտեղ Դավիթին ու Գալուստին հարցրին, թե Մայր Աթոռում, Դանիելից, Հովսեփից եւ Եփրեմից գաւո, արժանավոր ուրիշ թեկնածու կա՞, որին հետեւեց պատասխանը, թե՛ չկա, իսկ Հովսեփին եւ Գրիգորին կաթողիկոսները շատ ծեր են: Նրանք անուղ-

ղակ փորձեցին իրենց թեկնածությունը ներկայացնել, սակայն նրանց մասին անբարենպաստ նամակներ էին ստացվել: Խոսվեց Պրուսայի առաջնորդ Պողոս Կարակոչյան Եպիսկոպոսի մասին, սակայն բոլորը համաձայնեցին Նիկոմեդիայի եւ Արմաից առաջնորդ Բարթողիմեոս Կապուսիկյան Եպիսկոպոսի թեկնածության հարցում, որի օգտին խոսեց ինքը՝ Դանիել պատրիարքը: Պատրիարքին խնդրեցին հաջորդ օրն ընդհանուր ժողով գուլմարել Մայր եկեղեցում եւ Բարթողիմեոսին Կ. Պոլիս հրավիրել: Ժողովը կայացավ ապրիլի 12-ին՝ Դանիել պատրիարքի նախագահությամբ եւ ավելի քան երկու հարյուր անձանց մասնակցությամբ: Ներկայացվեցին Եջմիածնից ուղարկված նամակները, եւ համաձայնություն կայացավ Բարթողիմեոսի թեկնածության հարցում: Դժգոհեցին միայն Դավիթ եւ Գալուստ Եպիսկոպոսները: Նրանց կողմակիցներին ոմանք հայտարարեցին, որ թե կաթողիկոս Մայր Աթոռից չլինի, չի կարող հանգիստ հայտնաբերել: Սակայն նրանք բավարար չափով պաշտպանություն չեղան: Ժողովը ցրվեց, եւ որոշվեց խնդիրը լուծել ապրիլի 13-ին, ինչպես կարգադրել էր կառավարությունը:

Հուլիսից եղած Դավիթը եւ Գալուստը փորձեցին որոշումը խափանել՝ ասելով, թե պոլսեցիները կամենում են Մայր Աթոռ տապալել: Նրանք բնավորությամբ տարբեր էին: Դավիթը

բարձրահասակ էր, մեծակն, խուրազու ու դավադիր եուլյուն ուներ, գաղտնի հնարքների վարպետ էր, իսկ Գալուստը պարզամիտ էր, անխիճ ու միայն կարող էր գործից դառնալ ուրիշի ձեռքում: Ապրիլի 12-ին Դավիթը զնաց Գալուստի մոտ եւ գրգռեց նրան, թե արժանավորը եւս էր, եւ պետք էր օտար մարդ մտցնել Մայր Աթոռ: Գալուստն էլ ապրիլի 13-ին՝ կանուխ, զնաց Մայր եկեղեցին եւ բերանից եկան ասելով՝ ուրիշներին մեղադրեց, իրեն գովեց, իբրեւ թե հայրապետական աթոռի պատիվը իր պաշտպանում: Ավելին. նա, չգիտես՝ ինչ իրավունքով, համարձակվեց բանադրել կաթողիկոս ընտրված Բարթողիմեոս Եպիսկոպոսին: Նրա անարդեք նաեւ Դանիել պատրիարքին, փոխանորդ Կարապետ վարդապետին եւ իշխանապետներից չորսին, որոնց անունները հիշատակելը պարգանք անիմաստ է: Ժողովուրդը դիմեց պատրիարքին, որ նա Գալուստի հանդուստությունը զսպի եւ բշխ Արմաից վանք՝ նվիրակության հաշվներն առնելով: Դանիելն ստիպված արքունի իրամաններ խնդրեց կարճաժամկետով: Դավիթը, որ զգոնել էր Գալուստին, մեջտեղ չեղեց: Գալուստն ինքը 1802 թվի սեպտեմբերի 30-ին Դավիթին ուղղված նամակում խոսել է այդ մասին:

Շարունակելի
Բաբեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
39 ԳԱՄ թղթակցի անդամ,
պրոֆեսոր

ՄԱՇՏՈՅԱՆ ՀԱՅՈՑ ԳՊԱՏԱՌԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ 530-ԱՄՅԱԿԷ

Ինձ պատիվ է վիճակվել բացելու հայերեն առաջին տպագիր գրքի՝ «Ուրբաթագրքի» տպագրության 500-ամյա հոբելանսի նվիրված հանդիսությունը ԳԱՄ Գրականության ինստիտուտի գիտաժողովում 2012 թ. հունվարի 30-ին, ինչպես եւ Պատմության ինստիտուտի գիտաժողովում 2012 թ. դեկտեմբերի 25-ին: Դրա մեջ եւ տեսնում եմ յուրօրինակ խորհուրդ, տակավին ԵՊՀ-ի Արտասահմանյան գրականության եւ գերմաներեն լեզվի ասպիրանտուրայում սովորելիս՝ 1956 թ., կազմակերպեցի տպարան՝ բրայյան ունեցիկ տառերով գրքերի տպագրության համար: Իմ խմբագրությանը առաջին անգամ լույս տեսան ոչ միայն դասագրքեր բոլոր առարկաների ճով, այլեւ 20-ամյա արգելքից նոր հրատարակության թույլատրված երկիչ Չարեցի ժողովածուն եւ Սկոտչե Արմենի «Հեղեղար աղբյուր»-ը, Ավետից Իսահակյանի երկերը, Դաֆֆու «Սամվել»-ը, Ավսեն Խորենակուն «Հայոց պատմություն»-ը եւ այլն: Հայ գրքի 500-ամյա հոբելանսի առթիվ թող այսօր հիշվի նաեւ այս համեստ փաստը:

Համաշխարհային բազմալեզու տիեզերածավալ գրականության տպագրության, այդ թվում՝ հայ բազմադարյան հենադերի տպագիր բազմացման ամար համայն մարդկությունը պարտական է գերմանացի Յոհան Գուտենբերգին՝ տպագրության հանձնարել գյուտարարին, ում անունը ցավոք հազվադեպ է հիշատակվում: Իմ ձեռքին է XIX դարի առաջին կեսի ավստրիացի ակադեմիկոս Ռոմանտիկ Բանաստեղծ Նիկոլաուս Լենստի «Գուտենբերգ» բանաստեղծությունը, որ գերմաներենից թարգմանել եմ առաջին անգամ հայ գրքի տպագրության 500-ամյա այս հիմնական համաշխարհային հանդիսության առթիվ, որի պատվին Երեւանը հռչակվեց **գրքի տպագրության մայրաքաղաք**: Գուտենբերգին ծնված այս եզակի բանաստեղծությունը Լենստի տպագրել է առաջին անգամ 1835 թ.՝ իր մտերիմ ընկեր Ռայնբերգի Շտուտգարտում հրատարակած «Շիլլերյան ալբոմ»-ում, որը նվիրված էր մեծ բանաստեղծ Ֆրիդրիխ Շիլլերի մահվան 30-ամյա տարելիցին: Թե՛ն ծանոթագրություններում էլ կնշված, բայց Յ. Գուտենբերգի կենսագրության ուսումնասիրությունից պարզեցի, որ բանաստեղծությունը Լենստի հիացել է Գուտենբերգի գյուտի 400-ամյա տարելիցի առթիվ: Ահա իմ թարգմանությունը:

*«Երկրի կայրով ստրում է պաղ հողմ,
Նսես տարածում է, գիշեր ամեն կողմ,
Բայց դեռ մոլեգնում է մարդկության,
Հիս կորի՛ն՝ հանուն ազատության,
Լույսի, իրավունքի համար.
Ծակալոր են իրար դեմ համառ
Եվ կոտորում են իրար կրկին -
Եւ բաշխում են անա երկու կողմի գործին
Չեղբեր ու զրահներ անհաշիվ՝*

*Թող զարկվեն, դառնան դժոխքի բաժին,
Միայն այս քառսից խառնակիթոր
Մարդկությունը գտնի գեթ մի ժամ
անորոր»:*

*Այսպես խորից հանձնարի ոգին՝
Մարդկության առաջնորդը մեծ,
Երբ շնորհ տվեց Գուտենբերգին
Ու նրա ճակատը շոյեց:*

Ինչո՞ւ է այսպես զայրացած ավստրիացի ռոմանտիկ բանաստեղծը: Մարդկության առաջնորդի ուղին անցնում է ընդհատվում էր շարունակաբար արյունալի հանգրվաններով, հարյուրամյակներ տեւած խաժամով հորդաների արտագաղթեր, սեւ ու սպիտակ ոչխարների անվերջանալի հոտեր, որոնք իրենց իսկ ամայացրած անապատներին դուրս հորդացին դեպի առաջավոր Ասիայի եւ Եվրոպայի առատ խոտածածկույթները եւ արածելով՝ նվաճեցին այլ ժողովուրդների պատմական հայրենիքներ, տասնամյակներ տեւած խաչակրաց արշավանքներ, յոթ-նամյա ու երեսնամյա պատերազմներ Եվրոպայում, կարմիր ու սպիտակ վարդերի պատերազմ Անգլիայում:

Հույս կար, որ Յոհան Գուտենբերգի հանձնարել գյուտը՝ չիրքել ու գրականության անսահմանափակ բազմացնելու եւ տարածելու հրաշքը, քաղաքակրթելու է մարդկությունը եւ մարդկային բազմությունների կոչվել ռազմի դաշտերից փոխադրելու է թղթի անձայրաբեր սպիտակ դաշտերի վրա եւ դրանով իսկ լիցքաթափելու վայրագ արյունահեղության մարդկային եռանդը, քանզի ազատության լույսի եւ իրավունքի պատերազմն ընդունվում էր քաղաքակիրթ պայքար մղելու ձեռք՝ բանավեճ, հայացքների ու գաղափարների ընդդիմակայություն եւ փոխանակում: Բայց Յ. Գուտենբերգի գյուտից՝ այդ մտավոր գեղեցիկ, հավասարաբան օգտվելու էին նաեւ մութ ուժերը՝ լույսի մասին ճամարտակողներ: Գիրքը եւ տպագիր միջոցները՝ մամուլն ու լրագրությունը, աներեւակայելի նպաստեցին մարդկության զարգացմանը, որ ընթանում է նաեւ ջրհածից պոթեկուններով: Միջնադարյան տիտանների նման նորագույն ժամանակներում խարույկ բարձրագույն կամ գրքերը՝ որպես «քաղաքակրթության» առաջամարտիկներ, ուրեմն եւ՝ նախապես՝ 1934-35 թթ. Գերմանիայում՝ ֆաշիզմի տիրապետության համատարած խավաքում, այս ու այնտեղ կենտրոնում էին կրակներ. դա Հայկոյին Հայկեի գրքերն էին այրում խարույկի վրա, իսկ լույս ժամանակ խորհրդային Հայաստանում այրում էին Չարեցի Չարեցի «Գիրք ճանապարհի»-ն:

*Լուսավորում է աշխարհը կարծես,
հավարն էլ ոնց որ շատ չի՝ թանձրանում,*


*Երբ միջնադարյան
տիտանների պես
Գրքերն են արդեն
խարույկ բարձրանում:*

Եվ սակայն՝ վերջի վերջո հենց այս ամենից ձեռքազատվելու համար եղավ Յոհան Գուտենբերգի հանձնարել գյուտը:



Յոհան Գուտենբերգը (լրիվ անունն է՝ Johannes Gensfleisch zum Gutenberg) ծնվել է 1394 եւ 1399 թվերի միջեւ, ենթադրաբար՝ Մայնց քաղաքում, վախճանվել 3.02.1468 թվականին Մայնցում: Գուտենբերգը պատկանում էր Մայնցի պատրիկներից մեկի՝ Գենսֆլայշ (ազգի միս) կոչված ընտանիքին: Մայնցում պատրիկյան տոհմերի դեմ համբարությունների տարած հաղթանակից հետո նա փոխադրվեց Շտրասբուրգ, որտեղ տնտեսական ապրանքների զարգացող արտադրության եւ նրանց պիտանքների բազմացման, ինչպես եւ գիտության առաջնորդի վերաբերյալ տեղեկատվության տարածման անհրաժեշտությունը նրան մղեց տեղեկատվության ձեռքի արձագանքման, այն է՝ տպագրության գյուտի գաղափարին: 1436 թվականից սկսած, ոսկերիչ վարպետների մոտ ձուլման գաղտնիքների հմտնալով, ոսկերչական գործիքների եւ ձուլման նուրբ կաղապարների պատրաստման գործում ձեռք բերած փորձառությունը սրամիտ կերպով գործի դնելով՝ նա ստեղծեց ձեռքի ձուլման գործիք՝ ցանկացած քանակի լատիներեն համալսարանի տպատառեր ձուլելու համար: Իսկ 1444 թվին՝ Մայնց վերադառնալուց հետո, հորինեց համալսարանի շարժական տպատառերով շարվածքը բազմացնելու մասվիչ-հաստը, որն աշխատում էր աշ ու ձախ թեթյալ սեղմիչ կոթառի օգնությամբ, իսկ այդ գաղափարը Գուտենբերգը փոխառել էր խաղողից հյութ քամող սարքից: Այսպես նա ստեղծեց առաջին տպագրական հաստոցը եւ ստացավ տպագրության համար անհրաժեշտ սեւ երկր, որով էլ սկսեց տպագրության գործը: Իր գյուտով, տեխնիկական մտքի իր մոնոթոն Գուտենբերգը հիմք դրեց տպագրական հեղափոխությանը Եվրոպայում, որը քաղաքակրթության զարգացման առաջնորդում կատարյալ հեղափոխության էր հավասար:

Առաջին փոքր ծավալի տպագրություններից էին «Վերջին դատաստանը» եւ «Ալաշխարության նամակները»: Ուշադրություն է արժանի Գուտենբերգի հրատարակած «Թուրքական օրացույցը», որն այդպես է կոչվում սոսկ նրա համար, որ դրա 12 ամիսների թերթերին Աստուծոց խնդրվում էր քրիստոնեությունը եւ Եվրոպան փրկել 1453 թվին Կոստանդնուպոլիսից:



սը նվաճած Մահմուդ Բ սուլթանի թուրք լուգավներից: 1450 թվին, վաճառական Յոհան Ֆուստի տրամադրած վարկով, Գուտենբերգը իրագործեց իր հոյակապ գլուխգործոցը՝ 42 տողանոց իր խոյակապ Սուրբ Գրքի տպագրությունը, որն ավարտեց 1455 թվին եւ իր շքեղության շնորհիվ հետագայում կոչվեց «Գուտենբերգի Բիբլիա»: Այնուհետեւ ձեռնարկեց Մարկոմարանի նախապատրաստումը:

Տեսնելով ձեռնարկած գործի փայլուն հաջողությունը՝ վաճառական Ֆուստը, ուր սկզբում համաձայնել էր հավասարի իրավունքով մասնակցել այդ գործին, իր ներդրած գումարը շուտափույթ եւ ստանալով պահանջով, դատական գործ հարուցեց գյուտարարի դեմ եւ արդյունքում տեր դարձավ ոչ միայն տպագրական գործին, այլեւ Յ. Գուտենբերգի ամբողջ ունեցվածքը, տպագրական հաստոցը, Անավաճաշիչ օրինակները, նույնիսկ նախաձեռնած Մարկոմարաից անցան վաճառական թվին, ով իր փետա Շյոֆֆերի հետ 1457 թվին շարունակեց տպագրության գործը, իսկ Յ. Գուտենբերգը մինչեւ իր կյանքի վերջը (1468 թ.) փաստորեն անմասն մնաց իր ստեղծած գյուտի բարիքներից:

Գուտենբերգի Բիբլիան, ինչպես եւ Մայնցի Մարկոմարաիցը համարվում են տպագրական արվեստի բարձրագույն նմուշներ: Ուկան Երեւանցու համար, 1666 թվին Աստուրյանում հայերեն պատկերազարդ Աստվածաշունչը հրատարակվեց, անշուշտ, ոգեշնչման եւ ընթերցանական կատարյալ օրինակ պետք է ծառայել Գուտենբերգի Բիբլիան: Վերջինիս 46 օրինակները ներկայումս խիստ հաշվառման մեջ են գտնվում Գերմանիայում՝ ոչ միայն ինի գրքերի պետական պահուստներում, այլեւ անհատ զբոսաշրջների հավաքածուներում: Սա ընթերցանական արժանի կարեւոր միջոցառում պետք է լինի նաեւ մեզ անհամար նկատի առնելով, թե մենք ինչպիսի անհիմունական ենք վերաբերվում այնպիսի բարձրարժեք տպագրական օրինակներին, ինչպիսին է Ուկան Երեւանցու պատկերազարդ հայկական հնագույն տպագիր Աստվածաշունչ մատյանը, որի եզակի օրինակները մասնավոր հավաքածուներում որեւէ հաշվառման չեն ենթարկվում՝ ի տարբերություն Գուտենբերգի Բիբլիայի:

*Շարունակելի
Արթուր ՄՈՒՐԵՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր*

Բլավադ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ էջ 4

Նրա ստոր նպատակը ջրից դուրս գալն է. արարածները Նրա հետ մեկը պիտի դառնան, բայց, միեւնույն է, վերջնեն ինքնությունը. պարզապես նրանց ջնջելը կամ միաձուլելը ձեռք չի տալիս... Նա միայն սկզբում է մի փոքր ճնշում գործադրում, նրանց զգալ տալիս իր ներկայության հետ հաղորդակցությունը, որը, նրանց թույլ լինելուն, մեծ է թվում նրանց, զացմունքային քաղցրությամբ եւ փորձության դյուրին հաղթահարմամբ, սակայն երբեք թույլ չի տալիս, որ այս վիճակը երկար ձգվի... Վաղ թե ուշ Նա հետ է քաշվում, եթե ոչ իրապես, ապա գոնե նրանց գիտակցական փորձառությունից՝ վերացնելով այդ բոլոր օգնություններն ու խթանները... Նա թողնում է, որ արարածն ինքը կանգնի ոտքի՝ միայն սեփական կամքով կատարելու



ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Նվիրվում է Ջ. Թոլկինին (անգլիացի գրող, բանաստեղծ, բանասեր)

այն պարտականությունները, որոնք զուգվել են ամեն հաճույքից... Ահա այսպիսի անկումային շրջաններում է, որ, շատ աղքատ, քան վերջերների շրջաններում, արարածն աճում է՝ վերածվելու Նրա ուզած տեսակին... Այդ պատճառով էլ չորության հոգեվիճակում մատուցված աղողներն են, որ Նրան ամենից շատ են գոհացրել... Մենք կարող ենք մեր կողմը քաշել մեր ինամարկային՝ շարունակ փորձության ենթարկելով, որովհետեւ մենք նրանց միայն սեղանի համար ենք նախապատրաստում, եւ որքան ավելի ենք նրանց կամքին տիրում, այնքան լավ, իսկ Նա չի կարող «փորձել» նրանց՝ առաջնության մղելու համար, ինչպես մենք ենք անում՝ մեղքի մղելով... Նա ցանկանում է, որ նրանք սովորեն քայլել, ուստի

պետք է իր ձեռքը թողնի... Եվ եթե իսկապես քայլելու կամք ունեն, Նրան գոհացնում են անգամ սայթաքումները... Մի՛ խաբվիր, Օշի՛նդ... Մեր գործը երբեք ավելի վտանգված չի լինում, քան երբ մարդը, այլեւս չցանկանալով, բայց նպատակարարվելով կատարել մեր թշնամու կամքը, նայում է շուրջը՝ մի տիեզերքի, որից Նրա ամեն հեռեք անհետացած է թվում, հարցնում, թե ինչու է ինքը լավ, սակայն շարունակում հնազանդել... Բայց ինչպե՞ս անկումները մեզ համար են հնարավորություններ եւ տեղեփում... Հաջորդ շաբաթ եւ քեզ որոշ հանգամանք կանեն, թե ինչպես գործածես դրանք...

*Են սիրառատ քերի՝
ԿԱՌՆԱԿՉ
Անգլերենից թարգմանությունը՝ Մ. Ս. Ի*

ԽԱՉԱՏՈՐ ԱՐՈՎՅԱՆ. ԿՅԱՆՔԻ ԵՐԵՔ ՇՐՋԱՆ, ԵՐԵՔ ՄԻՋԱՎԱՅՐ

Անփոխարինելի է այն մեծ դերը, որ հապատոր Արովյանն ունեցել է մեր ժողովրդի մտավոր, մշակութային, գրական ու քաղաքական կյանքի առաջընթացի գործում: Նրա այդ բեղուն գործունեությունը ծավալվել է աշխարհագրական ու մշակութային տարբեր միջավայրերում, քաղաքակրթական ու տնտեսական երեք բոլորովին այլազան պայմաններում:

Դրանք Եջմիածինն ու Երեսանն էին՝ ժամանակի համար բնորոշ կրոնական հավատալիքներով ու կյանքի հետամուտ-ցությամբ, Թիֆլիսն էր՝ իր շատ թե չէ՝ աշխարհիկ ընդգրկումներով ու համակրվապես մշակույթի նոր ստեղծվող օջախներով, եւ «Դոդապաղ»՝ իր եվրոպական նկարագրով, ռուսական տիրապետության ներկայությամբ ու առաջադեմ կրթական կենտրոնով:

Որպես իր կյանքի գերխնդիր ունենալով Ֆայաստան աշխարհի քաղաքական ու ազգային ազատագրումն ու մշակութա-նամակդրչական առաջընթացը՝ Արովյանի այդ ամենն իրականացնելու ուղին ի վերջո հանգեցնում էր Ռուսաստան-Եվրոպա ուղեգծին՝ ջանալով այդ ճանապարհով ու նրանց օգնությամբ հասնել իր ուխտի կատարմանը:

19-րդ դարի սկզբում Ֆայաստանը շարունակում էր հեծել պարսկա-թուրքական լծի ներքո: Թե՛ն 1804-ից սկսած Արեւելահայաստանի որոշ հողակտորներ՝ Փամբակի, Շիրակի շրջանները՝ Գյումրիի բերդով, արդեն նվաճվել էին ցարական բանակի կողմից, սակայն միջնադարից ձգվող խավարը շարունակվում էր կյանքի բոլոր ապարդեղներում՝ տեղ չբռնելով ո՛ր տնտեսական, ո՛ր մշակութային ու ո՛ր էլ կրթական զարգացումների համար:

Ինչպես հապատուրը Զանաքեռից (*Զանաքեռն այդ ժամանակ թե՛ն ուներ Երկու հողակապ եկեղեցի, սակայն բաղկա-ծում էր ընդամենը 55 ծիսից*) հայտնվել էր Եջմիածին վանքում՝ իր անհայտ համար բարեպաշտ ծնողների կամքը՝ դարա-տանն ուսանել եւ դառնալ կրոնավոր: Սակայն մի կողմից քննքին տաղանդն ու «գորավոր հիշողությունը», մյուս կողմից

մեծ աշխարհի հետ շփվելու բուռն ձգտումը պատահի հապատուրին մղում են կյանքի նոր որակների որոնման: Եջմիածնում կարողանում է իր նախնական կրթությունը՝ 1823-ին Արովյանը Չաղպատում Անտոն արք. Մուղնեցու մոտ ծանայության է անցնում փոքրավորի պաշտոնով: Ուսման անհաջ տեղը եւ իր սիրելի հովանավորի՝ Մուղնեցու միջնորդությունը հնարավորություն են ընձեռում նույն թվականին մեկնել Տիֆլիս (Թիֆլիս) եւ սովորել տեղի վանական դպրոցում, ուր վարձապետներն իրենց աշակերտներին ավելի շատ պատմեցին էին տալիս, քան՝ գիտելիք: 1924-ին Արովյանն ընդունվում է Թիֆլիսի նորաբաց Ներսիսյան դպրոցը: Արովյանի համար սկսվում է կյանքի մի նոր շրջան՝ լի ծանոթ ու անծանոթ կյանքի շրջադարձերով ու փորձություններով:

Վրաստանը, 19-րդ դարասկզբին կորցնելով պետականությունը, մտել էր իր պատմության շրջադարձային մի շրջան, որտեղ կողք կողք էին ազգային ավանդական հարաբերություններն ու 1801-ից ռուսական տիրապետության հարուցած ազգամիջյան բարդ խնդիրները: Արովյանի ապրած շրջանում Տիֆլիսի առանձնահատկություններից մեկն այն էր, որ կյանքը գնալով քաղաքային քնույթ էր ստանում, մի բան, որ դեռ Ֆայաստանում չկար: 1841-ին գրված «Անարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի եւ հատկապես նրանց հարսանեկան տվորությունների մասին...» գործում Արովյանը հիշատակում է քաղաքակրթական այն փոփոխությունների մասին, որոնք կատարվում էին այդ տարիների Թիֆլիսում. նոր շենքեր ու փողոցներ, որոնք «ես չեմ մտնում եվրոպական տներին» (*տե՛ս Կ. Արովյան, Երկեր, Երեսան, 1984, էջ 600*): Եվրո-ասիական կենցաղով ապրող բարոյքը քնակչության բուռն աճ էր ապրում: Այն գնալով ծավալվում էր Զուռ գետի աջ ու ձախ փեղին: Ֆայաստանի թաղերից էին՝ Մեղա-սը, Չավաքարը, Սողոկը, Տափիթաղը եւ այլն: Զաղաքի առաջադիմության ու ընդարձակմանը նպաստում էր պարսկական լծի տակ գտնվող հայկական շրջաններից

քնակչության հոծ զանգվածների գաղթը Տիֆլիս, ինչպես նաեւ դեռեւս Բագրատու-կյաց թագավորության անկման հետեւան-քով հայկական քնակավայրերը վրացա-կան ենթակայության տակ անցնելու իրո-դությունը, ու որպես այդ ամենի արդյունք, գրական, մշակութային ու կրթական կյանքի ծաղկումը: 19-րդ դարի 30-40-ական թվականներին տարբեր ազգերից կազմված քնակչության թիվը Թիֆլիսում անցնում է 40 հազարից: Թիֆլիսաբնակ համայնքներն ունեին իրենց եկեղեցիները, որոնցից հայկական էին 8-ը: Զաղաքում գործել են շաքարի եւ մետաքսի գործա-րանները, գիմնազիան, գավառական դպ-րոցը, արքիեպիսկոպի պանսիոնը, ռուսական եւ հայկական հոգեւոր սեմինարիաները, ծխական դպրոցները, որոնց շատ ուսու-ցիչներ, Արովյանի վկայությամբ, իրենց «կարիք ունեին սկզբնական կրթության»: Անդրկովկասի «մայրաքաղաքը», որ ուներ շեշտված հայկական քնույթ, թե՛ն ապրում էր համընթախ կյանքով ու մեծի մասի խո-տում վրացերենով, սակայն սկսած հա-զուստից, վերջապահում ունեւիքով՝ խա-յտաբերել էր, մանավանդ հավատքով ու քաղաքական կողմնորոշմամբ: Զաղաքի մշակութային կյանքը հիմնականում առաջնորդվում էր մեջլիսներով, խրախ-ճանքներին ու բեֆերին ուղեկցող նվագ-ներին ու երգերով:

Ուրեմն պատահական չէր, որ այդ ժա-մանակվա Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին Ներսիսյան դպրո-ցը հիմնեց հենց Թիֆլիսում՝ Նպատակ ու-նենալով ավելի բարձր կրթություն ստա-նալու հնարավորություն տալ ինչպես Վրաստանում քնակվող, այնպես էլ նրա-կից դուրս ապրող հայերին, պատրաստե-լու ուսուցիչներ, գրագետ կրոնավորներ ու քաղաքացիներ: Նշենք, որ այդ շրջանում նման մակարդակի դպրոց չուներ քաղաքի ուրիշ ոչ մի համայնք: Թե՛ Վրաստանում, թե՛ Ֆայաստանում գործող ազգային կր-թական օջախներում, պատկերավոր ա-սած, «հոկված քարե դար» էր, եւ աշա-կերտները իմնականում գրում էին հարթ գլաքարերի վրա:



Արովյանի ուսանելու տարիների Ներ-սիսյան դպրոցում սովորում էր 70-80 աշա-կերտ: Նախատեսվում էր նրանց թիվը հե-տագայում հասցնել 800-ի: Ներսիսյան դպրոցի առաջին ավարտական քննու-թյունները կայացան 1826-ին: Շրջանա-վարտների մեջ էր նաեւ Արովյանը, ում մեջ արդեն վերջնականապես սարմավորվել էր Ռուսաստանի օգնությամբ Ֆայաս-տանն ազատագրելու գաղափարը:

Դեպի Կովկաս ռուսական մուտքը մեզ՝ հայերիս համար նպաստավոր էր այնքա-նով, որ ձեւավորվող կայսրությունը սաի-մանակից էր դառնում մուսուլմանական հարեւաններ ունեցող Ֆայաստանին, ինչը հեռահար կերպով կնպաստեր երկրի ինք-նուրույնության ու պետականության վե-րականգնմանը, մանավանդ որ ռուսական նվաճումները կանգ չէին առնելու եւ նպա-տակ ունեին հասնելու մինչեւ Միջերկրա-կանի ավերը. ռազմական քարտեզներում անգամ նշվում էին թուրքական մայրաքա-ղաքի՝ Կոստանդնուպոլսի ռուսական ան-վանումը՝ Ցարգրադ: Ռուսական նման քա-ղաքականությունը յուրովի պատասխան էր նաեւ այն կերտումներին, որոնք վա-րում էին պարսկական ու թուրքական իշ-խատությունները, ինչպես գրում է Արո-վյանն իր վեպում. «Էս կողմիցը՝ Աքաս Միրզեն, եւ կողմիցը՝ Ֆասան խանը քան-դելով, ավերելով եկեղ հասել էին, որ գևան Պետերբուրգ» (էջ 222):

Շարունակությունը՝ էջ 8

Խաչքարի բացման արարողություն Դանիայի Գյուլինեգ գյուղաքաղաքում

Ապրիլի 26-ին Դանիայի Գյու-լինեգ գյուղաքաղաքում, Ֆայոց ցե-ղասպանության 99-րդ տարեկիցի փոքոցառուների շրջանակում, ի հիշատակ դանիացի մարդասեր եւ հայասեր Կարեն Յեփեփե՝ տեղի ունեցավ խաչքարի բացման արա-րողություն եւ հոգեհանգիստ՝ Կենտրոնական եվրոպայի եւ Սկանդինավիայի երկրների հայրա-պետական պատվիրակի պաշտո-նակատար Տիրան վրո. Պետրոսյա-նի հանդիսապետությամբ եւ Սկան-դինավիայի հոգեւոր հովիվ չեղիշ վրո. Ավետիսյանի մասնակցու-թյամբ:

Խաչքարը տեղադրվեց 33 Ար-մավիրի մարգաթե Աշտո Ղահրա-մանյանի անձնական նախաձեռ-նությամբ եւ քարերարության, որի տեղափոխման աշխատանքներին մասնակցել են Դանիայում 33 ար-տավարդ եւ լիազոր դեսպան Յրա-յա Աղաջանյանը, Գյուլինեգի տե-ղական արխիվը, «Դան-Արմեն» հայ-դանիական առողջաջան եւ Ֆայաստանում գործող «Յանս Զրիստիան Կոֆոլե» բարեգործա-կան հիմնադրամը: Խաչքարի ինդի-նական եւ քանդակագործ Մուրեն Լու-սիկյանը:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի խաչքար Թբիլիսիում

Ապրիլի 21-ին Թբիլիսիի Ար Եջմիածին ե-կեղեցու բակում տեղի ունեցավ Ֆայոց ցե-ղասպանության զոհերի հիշատակին նվիր-ված առաջին խաչքարի օծման հանդիսա-րարողությունը: Խաչքարի տեղադրումը նախաձեռնել էր Վիրահայոց թեմը՝ պետե-րադարձակ Յրայա Պողոսյանի բարերա-րությամբ: Խաչքարը 3ին Ցուրայում արդե-բանցիների կողմից դնչացված խաչքաղե-րից մեկի նմանորինակն է (վարպետ՝ Վա-րազդատ Յամբարձումյան):

Խաչքարի օծման հանդիսավոր արարո-ղությանը ներկա էին Վրաստանում 33 ար-տավարդ եւ լիազոր դեսպան Դովհանես Մանուկյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսան Պողոսյանը, Աջա-րիայում, Գուրիայում եւ Իսերեթիայում գլ-խավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը, Թբիլիսիի Պետրոս Արամյանի անվան հայ-պետդամայի թատրոնի գեղարվեստական

դեկավար Արմեն Բայանդուրյանը, Անդրկով-կասում Լատինա կաթոլիկական թեմի ա-ռաջնորդ Ցուգեպպե Եպս Պազուտոն, Վրաստանում Ավետարանական-մկրտական Եկեղեցու արքեպիսկոպոս Մախիազ Սոնուր-լաշվիլին, Վրաստանում Ավետարանական-յութերական Եկեղեցու առաջնորդ Դանս-Յոսիհիմ Կիրելենը, 33 Սփյուռքի նախարա-րության Կովկասյան վարչության տնօրեն Տարոն Շաղուրյանը, հյուրեր Սամցխե-Ջա-վախիցի, Զվենդ-Ջարթլիցի, Աջարիայի Ինք-նավար 3անրապետությունից, Ֆայաստանի 3անրապետության տարբեր տարածաշր-ջաններից, Ռուսաստանի Դաշնությունից: Խաչքարի օծման հանդիսավոր արարողու-թյանը ներկա էր բարերար Յրայա Պողոսյա-նը՝ ընտանիքի եւ բարեկամների հետ:

Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպս Միրզախանյանի հանդիսապետու-թյամբ Սամցխե-Ջավախիցի եւ Ծակայի ընդ-

Վիրահայ համայնքը նշեց հայոց Մեծ եղեռնի 99-րդ տարեկիցը

2014 թվականի ապրիլի 24-ին Վիրահա-յոց թեմի Ար Եջմիածին եկեղեցում Վազգեն Եպս Միրզախանյանի հանդիսապետու-թյամբ մատուցվեց Պատարագ, որին ներկա էին Վրաստանում 33 արտակարգ եւ լիազոր դեսպան Դովհանես Մանուկյանը, Վրաս-տանի խորհրդարանի պատգամավոր Ռուս-յան Պողոսյանը, համայնքային կառույցների ղեկավարներ եւ հոծ բազմություն: Պատա-րագից հետո ժողովուրդը հավաքվեց եկեղե-ցու բակում տեղադրված խաչքարի մոտ, որ-

տեղ Վիրահայոց թեմի առաջնորդի եւ հոգե-վոր դասի մասնակցությամբ կատարվեց հո-գեհանգիստյան կարգ:

Այնուհետեւ ժողովուրդը բողոքի պա-ստոններով, 33 եւ Վրաստանի պետական ու համայնքային որոշներով շարժվեց դեպի Թբիլիսիում Ռուրքիայի 3անրապետության դեսպանություն, որտեղ կազմակերպվեց բո-ղոքի խաղաղ ակցիա: Խաղաղ հանրահավա-քին մասնակցություն ինչպես Թբիլիսիի հայկա-կան կազմակերպություններ, այնպես էլ Թբի-

լիսիի այլ համայնքների Ներկայացուցիչներ: Բողոքի ակցիան դարձավ դատապարտման, ճանաչման եւ հատուցման ոգեկոչում:

Ի դեպ, ապրիլի 22-ին Ասպինձայի շրջա-նի Դամպա գյուղում, ապրիլի 23-ին Նինո-միխայելում եւ տեղի ունեցավ հայոց Մեծ ե-ղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչ-քարերի բացում:

Լրատվական կյուբեր՝
ՄԱՐԻ ԱՌՈՒ ՄՈՐԻԶ ԷՍՄԻՆՍԻ
ՏԵԼԵԿԱՏԱԿԱՆ ԶԱՄԱՎԱՐԳԻ

